չէ։ Կարծեմ 7—8 տարի է որ գոյութիւն ունի այդ «հասարակական հիմնարկութիւնը» և անշուշտ դեռ շատ տարիներ էլ կը շարունակի սրտի բերկրանք պատճառել գեղեցկասէր երեւանցիներին։

Հոտը սաստկութեամբ փչում է, մարդու գլուխ ծակում, դրօշակը ֆռֆռում, ծածանվում և երեւանցին զուարճանում է հոտ քաշելով և մաքուր օդ ծծելով...

Գիտնական Վիլլիամօվիչը իր շարադրութեան մէջ համոզիչ փաստերով ապացուցանում է, որ առհասարակ էստետիքական զգացմունքը հիմնված է նիւթական օգտի վրա։ Զափազանց հետաքրքիր կը լինէր, եթէ քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները մի մասնաւոր նստի մէջ, ամեն մէկը իր մասնագիտութեան տեսակէտից, որոշէին «բարակ հոտ» և «ֆռֆռող դրօշակի» նիւթական օգուտը... Էստետիքականը ակներև է...

Ս. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հինգշաբթի օր, 13-ին օգոստոսի լինելու է Արծրունու թատրոնում հայ սիրողների մի կոնցէրտ-ներկայացում, յօգուտ մի երիտասարդի, որ գնում է Ս. Պետերբուրգի երաժշտական դպրոցը, երգեցողութեան մէջ կատարելագործվելու համար։ Կոնցերտին կը մասնակցի պ. Մոյինեանը, որ ինչպէս ասում են, գեղեցիկ ձայն ունի։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Աստապատ գիւղում մօտիկ օրերս մի քանի օտարական պարսիկներ չարախոհութեամբ իրանց մէկ ընկերին խեղդամահ են անում պարանով և նորաշէն մէչիթի առաստաղի գերանից, ներսի կողմից կախ են տալիս։ Նոյն գիւղի մի հայ երիտասարդ բահը ուսին դրած, գնալիս է լինում յանդը. տեսնելով կախածին, նա բահով շարժում է դիակը և յանկարծ ահարկու սարսափ է տիրում ողորմելուն։ Նա փախչում է յանդը, իսկ այնտեղ մի ահագին օձ սկսում է հալածել անբաղդին։ Վախից նա հիւանդանում է և երեկոյեան տուն վերադարձած՝ պարկում է։ Երեք օրից յետոյ խեղճը մեռնում է։»

—

Մեզ պատմում են հետեւեալը։ Էջմիածնից Մանկունու յանձնարարութեամբ Թիֆլիսի տէր Սարգիս Աղաջանեան աւագ քահանան մի վաճառականից գնելով ճեմարանի համար 3,500 արշին կտաւ, ստիպում է վաճառականին որ իւրաքանչիւր մի արշինի գնի վրա հաշւացուցակի մէջ մի մի կօպէկ աւելի գրէ։ Վաճառականը չէ համաձայնվում աւելացնելու, առանց մի օրինաւոր պատճառի։ Այն ժամանակ տէր-հայրը իր անելիքը փաստաբանելու համար, հաւատացնել է սկսում, որ Էջմիածնից իրան վրա փող ուղարկած ժամանակ, թէև ծրարի վրա գրած է լինում 1,000 բուբլ, բայց բաց արած ժամանակ գտնում է միայն 800 բուբլ. տէր-հայրը յոնքը չինելու տեղ, աչքն էլ է հանում, քանի որ յայտնի է թէ փոստատան մէջ չէ կարելի ութ հարիւր բուբլու ծրարը հազարի տեղ ընդունել տալ։ Իսկ ճշմարիտն այն է, որ մեր զանազան տէր Սարգիսները հայ աղքատ գիւղացիներից ազգի որդոց լուսաւորութեան համար կօպէկ կօպէկ ժողոված նուէրներից կամենում են իրանց համար առատ կօմիսիա վերցնել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՆՉԻ՞Ս ԿԸ ԿԱՐՕՏԻ

—

Այս խնդրոյն նկատմամբ երկու տեսակ կարծիք կայ հրապարակին վրայ։

Ոմանք կըսեն «Հայաստանի ժողովուրդն ուսման և կրթութեան պէտք ունի»։ Ոմանք ալ կըսեն թէ՝ մշակութեան, արուեստից և վաճառականութեան զարգացումն անհրաժեշտապէս հարկաւոր է անդ։ Այս երկու կարծիքներն ալ իրենց պաշտպաններն ունին, որք զօրեղապէս կը փաստաբանեն։

Գեր. Օրմանեան ալ Հայաստանի մայրաքաղաքի մէջ իւր ստացած մի տարուան փորձառութեան վրայ յենլով՝ կը փորձէ հաստատել թէ արուեստք և մշակութիւնք ի Հայաստան Հայուն ձեռքն են և կը պընդէ ըսել թէ ուսում և կրթութիւն ծաւալելու պէտքն աւելի զգալի է։ Զորեքշաբթի աւուր «Մասիսի» մէջ Գեր. Օրմանեանի շարունակելի յօդուածին հոգին ճիշդ այս էր։

Մենք ալ՝ ըստ որում ի Հայաստան ճանրորդութիւն ըրած, տարիներով երկիրն ու ժողովուրդին բարոյական և տնտեսական վիճակն ուսումնասիրած ենք, կը համաձայնինք Գեր. Օրմանեանի հետ ըսելու թէ արուեստք և մշակութիւնք Հայաստանի մէջ Հայուն ձեռք են այսօր։

Բայց երբ քննենք այդ արուեստից և մշակութեան արդի վիճակը, խնդիրն այն ատեն բոլորովին կը փոխուի և սա խնդիրը քննել հարկ կըլլայ թէ՝ զատոնք իրենց ներկայ վիճակին մէջ թողուլ և միմիայն ուսումն և կրթութիւնն յառաջ տանիլ պէտք է, թէ ուսման և կրթութեան ծաւալմանն հետ նաև արուեստից և մշակութեան զարգացումն ալ հարկաւոր է։ Մեր այս յարուցած խնդրոյն կը խնդրենք որ լաւ ուշադրութիւն ընծայուի։

Արուեստից և մշակութեան զարգացում պէտք է ըսելէն բնաւ չը հետեւիր թէ Հայաստանի մէջ արուեստք և մշակութիւն չը կան։ Այդ խօսքն եթէ տրամաբանական հետեւութիւն մ'ունի, այն ալ սա է թէ հոն արուստք և մշակութիւն կան, սակայն իրենց նահապետական վիճակին մէջ են, որք ըստ տեղական պիտոյից և ըստ պահանջման ներկայ և մանաւանդ ապագայ ժամանակին՝ գոհացուցիչ լինելէ հեռի են և հետեւաբար հարկ է որ զանոնք զարգացնելու, այն է յառաջ տանելու հոգ տարուի։ Ըսել է բուն խնդիրը գոյին և չը գոյին վրայ չէ, այլ զարգացնելուն, որ բընութեան օրէնք է, և մարդիկ ու ազգերն ալ յառաջադիմութեան դասը բնութենէն կը սառնան, բնութենէն, ուր ամեն բան կը շարժի, և ահա այդ շարժման յառաջադիմութիւն անունը կուտան։ Այդ յառաջադիմութիւն պէտք է՞, թէ ոչ։

Եթէ պարտք է հետեւիլ բնութեան օրինաց, և եթէ հարկ է ժամանակիս ոգւոյն և պահանջման առջև ժողովուրդը պատրաստել, անհրաժեշտապէս հարկ է նաև յառաջադիմել և այդ յառաջդիմութիւնը կատարեալ ըլլալու համար մտաւոր և բարոյական կրթութեան հետ անհրաժեշտապէս հարկ է նաև արուեստ և մշակութիւն, որ անդիմադրելի պէտք մ'է։

Այդ պէտքն ասկէ առաջ «Լոյսի» մէջ խիստ ընդարձակ կերպիւ բացատրած և ժողովուրդը պատրաստելու միջոցներուն վրայ խօսած ենք մի առ մի, առարկելով թէ ինչ կըլլայ Հայուն վիճակն ի Հայաստան, երբ Եւրոպայի դրամատեարք Հայաստանի մէջ արտօնութիւններ ձեռք բերեն անդ, և դարձեալ ի՞նչ կըլլայ Հայուն վիճակն և ի՞նչ կրնայ ընել Հայն իր այս վիճակին մէջ մնալով՝ երբ օր մը Եւրոպացի գաղթականները սկսին ի Հայաստան բնակութիւն հաստատել.—գուշակութիւն կամ մարգարէութիւն ընելու պէտք չը կայ։ Ժողովուրդն որ արդէն աղքատ է, իր ունեցած արդի արուեստներովն ու մշակութեամբը չը կրնալով մրցիլ Եւրոպացւոյն հնարագիտութեանն և նորա նրբամիտ խորամանկութեանն հետ՝ պիտի ստիպուի հաց ճարելու համար կամ բոլորովին իր հայրենի երկրէն դուրս գաղթելու և կամ իր հայրենի երկրին մէջ պատառ մը հացի համար Եւրոպացւոյն ծառայելու։ Մեր այս ըսածը կրնանք օրինակով մը հաստատել։

Անգղիացիք Հնդկաստանի տէր ըլլալէ առաջ՝ Հնդկաստանի արուեստներն ու վաճառականութիւնն՝ ինչպէս նաև երկրին վարչութիւնն ալ Հայոց ձեռքն էին, բայց երբ Անգղիացիք տէր եղան բուն իսկ Հայոց օգնութեամբն այդ երկրին, ի՞նչ եղաւ հոն Հայոց վիճակը.—բացատրելու հարկ չը կայ, որովհետև ամենուս ալ յայտնի է արդէն։ Այսպիսի պարզ իրողութեան մը առջև կրնանք մակաբերել այն հետեւանքներն, որ կրնան յառաջ գալ մեր անպատրաստականութեանը պատճառաւ, երբ Եւրոպացի դրամատեարք արտօնութիւններ ձեռք բերեն և կամ, ինչպէս անհաւանական չը թուիր, Եւրոպացի գաղթականութիւններ հաստատուին ի Հայաստան։

Մենք զմեզ խիստ աղէկ կը ճանչնանք և պէտք է որ ճանչնանք։ Ինչ որ չունինք և ինչ որ չենք, զայն ըլլալ կը կարծենք և այնպէս կուզենք հաւատալ թէ պատրաստականութիւն և ամեն կերպ արժանաւորութիւն ունինք։ Թող օտարին առջև այսպէս երևանք. ատկէ կորուստ չունինք, շահ ունինք. բայց ներքնապէս պէտք է աղէկ գիտնանք և ճանչնանք մեր բուն վիճակն ու կացութիւնն և հետամուտ ըլլանք թէ մենք ինչ և ո՛րպիսի անհրաժեշտ պէտքեր ունինք։

Մենք զմեզ խիստ աղէկ կը ճանչնանք ըսինք. այո, կը ճանչնանք, որովհետև գիտենք որ երբ վտանգը դեռ չէ հասած, ոտքերնիս ջուրը կը կախենք. իսկ երբ վտանգն հասնի, մէկէն ի մէկ կը բռնկինք, իրար կանցնինք, աղաղակներով օդը կը թնդացնենք և կրակ կայ կը պոռանք։

Պարզ ըսենք, երբ գործելու ատեն կայ, խօսքով կանցնենք ժամանակիս, անշուշտ կարծելով թէ խօսիլը գործել է և ահա այս պատճառաւ է որ մենք մինչև հիմա չենք կրցեր պարագաներէ օգուտ քաղել։ Այսօր ալ ճիշդ նոյն վիճակին մէջ ենք տակաւին, այսինքն, դեռ կը վարանինք գիտնալու համար թէ Հայաստանի ժողովուրդն ինչ բանի պէտք ունի։

Այս հարցման պատասխանը կուգայ ճիշդ ու ճիշդ բացատրել սա խնդիրը թէ Հայն Հայաստանի մէջ ինչպէս կրնայ ապրիլ և իւր ազգայնութիւնը պահպանել։ Ըսել թէ միմիայն ուսման և կրթութեան ծաւալմամբ կրնայ Հայն Հայաստանի մէջ իրեն յարմար և վայելուչ դիրք մը բռնել, խնդիրը չը հասկնալ կը նշանակէ։

Նոյնպէս՝ առարկել թէ միմիայն արուեստից և մշակութեան զարգացմամբ կըրնայ Հայն անդ կարևոր դիրք մը ձեռք բերել, կը նշանակէ դարձեալ թէ խնդիրը լաւ չէ ըմբռնուեր։

Ոչ միայն ուսման և կրթութեան ծաւալմամբ և ոչ ալ միայն արուեստից և մշակութեան զարգացմամբ, այն է, անտեսական վիճակի բարւոքմամբ կրնայ նոյն դիրքը ձեռք բերել, և հետևաբար՝ երկրին իբրև մի պատրաստ, արժանաւոր և միակ կարևոր տարրն համարուիլ։ Ուստի մեր եզրակացութիւնն այն է թէ ուսման և կրթութեան ծաւալման հետ նաև հարկ անհրաժեշտ է արուեստից և մշակութեան զարգացման ալ լրջօրէն հոգ տանիլ։

Այժմ կը մնայ գիտնալ թէ Հայաստանցւոյն ինչ և ո՛րպիսի կրթութիւն տալ պէտք է, և թէ արուեստից և մշակութեան զարգացում ըսելով ի՞նչ պէտք է հասկնալ։

Ասոնք պիտի ըլլան այսուհետև մեր քննելիք խնդիրները։

(Լոյս)

ԱՆԳԼԻԱ

—

Լօրդերի ժողովը համեմատաբար շատ քիչ ժամանակ գործ դրեց իրլանդական կալուածական օրէնքը քննելու և ընդունելու համար։ Գլադստոնի մշակած և առաջարկած վերանորոգութիւնը համայնքների ժողովի մէջ քննվում էր ամբողջ երեք ամիս։ Ամեն բան, ինչ որ կարելի էր ասել յօգուտ կամ ընդդէմ օրինագծի, արդէն ասվեցաւ համայնքների ժողովի մէջ, այնպէս որ լօրդերը շատ քիչ նոր բան պէտք է աւելացնէին։

Շատերի համար կարող է օտարօտի երևալ այն հանգամանքը, որ լօրդերի ժողովի մեծամասնութեան առաջնորդները խիստ կրիտիկայի ենթարկեցին այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է Գլադստոնի օրինագիծը և այնու ամենայնիւ վերջնական վճիռ կայացրին օրինագիծը ընդունելու համար։ Հէնց որ օրինագիծը առաջարկվեցաւ լօրդերի ժողովին պահպանողականների պաշտօնական առաջնորդ լորդ Սալիսբիւրի կողմից օրինագիծը խիստ քննադատութեան ենթարկվեցաւ և վերջնականապէս պախարակվեցաւ։ Նոյնպէս վարվեցան պահպանողականների և այլ նշանաւոր անդամները։ Այնու ամենայնիւ վճռվեցաւ սկսել օրինագծի երկրորդ ընթերցանութիւնը և մի քանի փայլուն ճառերից և անշան փոփոխութիւններից յետոյ կալուածական ամբողջ օրինագիծը ընդունվեցաւ լօրդերի ժողովից գրեթէ առանց քուէարկութեան։

Անգլիական լօրդերը այս անգամ էլ հաւատարիմ մնացին իրանց անցեալի աւանդութիւններին, անիրաւացի համարելով արգելք դնել մի վերանորոգութեան իրագործմանը, որի անհրաժեշտութիւնը ճանաչվեցաւ անգլիական հասարակական կարծիքից և նրա գլխաւոր ներկայացուցիչ համայնքների ժողովից։ Լօրդերի ժողովը յայտնեց իր կարծիքը նոր օրէնքի մասին և այնուհետև հաստատեց նրան, ազատ մնալով պատասխանատուութենից։ Եթէ այդ վերանորոգութիւնը վատ հետևանքներ կունենայ, լօրդերը կարող են արդարանալ, ցոյց տալով իրանց ընդդիմադրութիւնը և քաղաքական հեռատեսութիւնը, իսկ եթէ վերանորոգութիւնը լաւ կը լինի, նրանք կարող են պարծենալ, որ օրինագիծը իրանք հաստատեցին։ Այդպիսով լօրդերի ժողովը մեծ խոհեմութիւն արաւ, չեզոք մնալով այդ նշանաւոր հարցի վերաբերութեամբ և կատարելով այն դերը, որ նրան տուել են անգլիական օրէնքները։

—

ԳԼԱԴՍՏՈՆԻ ՃԱՌԸ

—

Լոնդոնի լօրդ-մերի տարեկան սովորական ճաշի ժամանակ Գլադստոն արտասանեց հետևեալ ճառը։ «15 ամիս սրանից առաջ մենք ընդունեցինք կառավարական իշխանութեան ծանր և մարդկային ուժերից վեր եղած լուծը։ Որքան էլ ընդարձակ լինեն կառավարութեան ընդունակութիւնները, որքան էլ նա լարէ իր դիմերը, նոյնու ամենայնիւ նա կատարելութեամբ չէ կարող իրագործել այն բարձր կոչումը, որ որոշել են նրա համար մի ընդարձակ երկրի շահերը։ Այսպէս թէ այնպէս հայեացք ձգելով այդ անցեալ 15 ամիսների վրա, որ հարուստ է տխուր և մխիթարական անցքերով, կը տեսնենք, որ այդ ժամանակամիջոցը աննկատելի չէ անցել թէ մեզ համար և թէ օտարականների համար։ Այն ինչոր ես կամենում եմ ասել մեր անցյալ